



Մարդու իրավունքների հարցերով Եվրոպական Եկեղեցիների Խորհրդատուի (ԵԵԽ) թեմատիկ խումբ

Մտորումներ՝ COVID-19 համաճարակի դեմ պայքարի ընթացքում կրոնի կամ հավատքի ազատության շուրջ

2020 թվականը բացառիկ դարձավ քրիստոնեության պատմության մեջ Եվրոպայում, և իրապես, ողջ աշխարհում: Այս տարի շատ երկրներում քրիստոնյաները չկարողացան հավաքվել՝ ոգեկոչելու և տոնելու Չատկական տոնը՝ Հիսուս-Քրիստոսի խաչելությունը, մահը և հարությունը: Պատճառն իրավական միջոցառումներն են, որոնց նպատակն է կանխարգելել խիստ վարակիչ Sars-CoV-19 վիրուսի տարածումը և դրա արդյունքում ձևավորվող CoV-19-ի հետ կապված հիվանդությունը, որը հատկապես խոցելի խմբերի մոտ մահացու էլք կարող է ունենալ: Եկեղեցիներում Չատկի տոնակատարությունների արգելումը ընդամենը աշխարհում մարդու իրավունքների և քաղաքացիական ազատությունների բազմաթիվ ազատությունների գործածման սահմանափակումների մեկ օրինակ է՝ ուղղված ֆիզիկական հեռավորություն անձից անձ վարակի տարածումը:

Քանի որ ներկա ժամանակաշրջանում կրոնական ազատության կամ այլ հիմնարար իրավունքների սահմանափակման նմանատիպ այլ օրինակ չի եղել, իսկ այդ իրավունքները սովորաբար դիտվում են որպես մեր ժողովրդավարության և Եվրոպայում օրենքի գերակայության հիմնաքար, մարդու իրավունքների ԵԵԽ թեմատիկ խումբը ուշադրությամբ քննել է այդ հարցերը և եկել հետևյալ եզրակացություններին.

1. Կորոնա վիրուսի նոր տեսակը մարդկության համար լուրջ մարտահրավեր է: Առանց վիրուսի հանդեպ լայն դիմադրողականության, պատվաստումների և հաստատված բուժումների, այս համաճարակի բռնկումը կարող է խաթարել ազգային առողջապահական համակարգերն ամբողջ աշխարհում և ավելի շատ մահեր առաջացնել, քան ինքնին վիրուսի վարակի բժշկական ցուցումները: Հետևաբար, շատ կարևոր է դանդաղեցնել դրա տարածումը, որպեսզի ազգային առողջապահական համակարգերը կարողություն ունենան վարակվածության տվյալ մակարդակում գործելու և ցանկացած պահի բուժել և նվազեցնել հիվանդացողների թիվը:
2. Համաճարակի կանխման լավագույն միջոցը մարդկանց միջև ֆիզիկական շփման խիստ սահմանափակումն է: Սա նշանակում է, որ բոլոր այն գործողությունները, որոնք բացարձակապես անհրաժեշտ չեն, պետք է հասցվեն նվազագույնի: Հիմնվելով մի քանի միջազգային և եվրոպական օրենսդրությամբ ամրագրված հիմնարար իրավունքների վրա, սահմանափակել և խստորեն արգելել խանութների, առևտրային կետերի աշխատանքները, չեղարկել մշակութային և սպորտային միջոցառումները, անգամ մասնավոր հավաքույթներն ու ազգային տոնակատարությունները:

3. Այս սահմանափակումները ներառում են նաև «Կրոնի և հավատքի ազատության» իրավունքները (ԿՀԱԻ), որը յուրաքանչյուր մարդու ազատություն իրավունքն է՝ «արտահայտելու իր կամ իր համայնքի հավատացյալների կամքը՝ հասարակական կամ մասնավոր վայրերում դրսևորելու իր հավատքը կամ կրոնական համոզմունքները, երկրպագելու, կամ մասնակցելու ծիսական արարողություններին»:
4. Մինչ որոշ հիմնարար իրավունքներ, ինչպիսիք են խղճի կամ խոսքի ազատությունը, կախված չեն սոցիալական շփումից, մյուսները կախված են: Կրոնի կամ հավատքի ազատությունը, և հավաքների, կամ միությունների ազատությունը իրավունքներ են, որոնք սերտորեն կապված են հավատացյալ համայնքի հավաքների հետ, և, հետևաբար, առանձնակիորեն կրում են որոշակի ազդեցություններ գործող միջոցառումներով: Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների եվրոպական կոնվենցիա, հոդված 9:
5. Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան, ինչպես նաև մարդու իրավունքների այլ փաստաթղթերը, մասնավորապես նշում են հանրային առողջությունը՝ որպես ԿՀԱԻ-ի սահմանափակման պատճառ: Որոշ նահանգներ նույնիսկ հայտարարել են արտակարգ իրավիճակների մասին, ինչը նաև թույլ է տալիս կոնվենցիայով հիմնարար իրավունքների որոշ սահմանափակումներ: Այնուամենայնիվ, նույնիսկ այն ազգային սահմանադրությունները, ինչպիսին օրինակ՝ գերմանական հիմնարար օրենքն է, որոնք չեն մատնանշում ԿՀԱԻ-ի սահմանափակման կոնկրետ պատճառներ, միշտ հաշվի են նստում այլոց հիմնարար իրավունքներ ու սահմանադրական կարգի հիմնական արժեքների հետ՝ որպես ԿՀԱԻ-ի իրականացման բնորոշ խոչընդոտներ և հակամարտության դեպքում համապատասխանաբար հավասարակշռում են դրանք:
6. Հիմնարար իրավունքների հիմնական սահմանափակումները, որոնք կիրառվում են ներկայումս, ներառյալ ԿՀԱԻ-ը, ընդհանուր առմամբ օրինական են և ընդունելի են մարդու իրավունքների տեսանկյունից: Կրոնական տեսանկյունից բարձր է նաև թույլերի և խոցելի խմբերի պաշտպանության արժեքը և պետք է հավասարակշիռ լինի համայնքի և հավաքների անհրաժեշտությանը:
7. Մինչդեռ հետապնդումների, կոտորածների և ցեղասպանությունների, և նույնիսկ նախկին համավարակների ժամանակներում եկեղեցիները շատ հավատացյալների համար հանդիսացել են որպես ապաստաններ և մխիթարության վայրեր, չի կարելի հավաքների սահմանափակումն այս համատեքստում ընդունել որպես կրոնական ծառայությունների արգելք, որպես կրոնական խտրականություն և հետապնդում: Ներկայումս այս միջոցը նպատակ ունի պաշտպանել մարդու կյանքը, պաշտպանել ինչպես հավատացյալներին, այնպես էլ՝ հասարակության մյուս անդամներին:
8. Այնուամենայնիվ, հիմնարար իրավունքների բոլոր սահմանափակումները պետք է ունենան իրավական հիմք, լինեն անհրաժեշտ, հարմար, խելամիտ և, ընդհանուր առմամբ, համաչափ այն նպատակին, որին ծառայում են, և այն իրավունքներին որոնք

սահմանափակում են: Պետք է հաշվի առնել նաև հավասար վերաբերմունքի սկզբունքը, ներառյալ միջոցառումների հետևողականությունը: Իրավական պրակտիկայում այս պահանջները առաջացնում են բարդ գնահատականներ և հանգեցնում են բարդ հավասարակշռության, ինչը պահանջում է լուծումներ՝ ամեն կոնկրետ դեպքի համար:

9. Ներկայիս անխուսափելի և վտանգավոր սպառնալիքը ընդհանուր առմամբ չի ազատում գործադրին, կամ նույնիսկ կառավարության օրենսդիր մարմինն այդ պահանջներից: Մեր իրավական կարգը կախված է դրանցից: Մի շարք իրավական և կրոնական համայնքներ հարց են բարձրացնում, թե արդյոք «արգելափակման» հետ կապված բոլոր միջոցները համաչափ են, և թե արդյոք ըստ օբյեկտիվ համեմատության հավասարապես են վերաբերվում բոլոր դերակատարներին:
10. Միևնույն ժամանակ, իրավիճակի անկայունությունն ու վտանգավորությունը իշխանություններից պահանջում է ընդունել լուրջ և հապճեպ որոշումներ հնարավորինս արագ՝ տալով ավելի մեծ կարևորություն իրավիճակին: Կարելի է ասել, որ բժշկական հաստատությունները որոշ ժամանակ նախազգուշացրել են համաճարակի վտանգի մասին և նույնիսկ առաջարկել շտապ օգնություն տրամադրելու ծրագրեր: Այնուամենայնիվ, եթե անգամ լինեն հստակ, նախապատրաստված համաճարակի զարգացմանն ուղղված ծրագրեր, ապա այս իրավիճակը նոր է ու վտանգավոր բոլոր նրանց համար, ովքեր գտնվում էին քաղաքական պատասխանատվության դիրքերում: Հասարակությունը, հիմնարար իրավունքների կրողն է, և պետք է տեղյակ լինի, որ գործող սահմանափակումները հիմնականում ծառայում են մարդու կյանքը պաշտպանելու բարոյական հրամայականին, և չունեն այլ քաղաքական հիմքեր:
11. Հետևաբար, մինչ անհրաժեշտ է օրենքների վրա հիմնված ժողովրդավարական պետություններում սերտորեն դիտարկել և վերահսկել կառավարության գործողությունները, հատկապես, երբ դրանք սահմանափակում են հիմնական իրավունքները, այնուամենայնիվ ժամանակը չէ ցուցաբերելու «քաղաքացիական անհանդուրժողականություն»: Այս սահմանափակումները վերաբերվում են նաև կրոնական համայնքներին, որոնք պետք է մտահոգաբար մոտենան Չատկի, Պեսախի և Ռամադանի տոնակատարությանը՝ և անցկացնեն այդ ծիսակատարություններն առանց հասարակության հետ շփման:
12. Եթե քաղաքացիները կասկած ունեն որևէ միջոցառման օրինականության վերաբերյալ, ապա խորհուրդ է տրվում դիմել դատարան՝ գնահատելու և, անհրաժեշտության դեպքում՝ ճշտելու անցկացվող միջոցառումներին վերաբերող հարցերը: Սա ոչ թե համերաշխության պակաս է, այլ մեկ այլ հիմնարար իրավունքի իրականացում, որն է՝ իրավաբանական պաշտպանությունը:
13. Տեսնելով խնդիրների բարդությունները՝ դատարանները չեն կարող շտապ կարգով նախնական որոշումներ կայացնել բողոքների վերաբերյալ: Անհրաժեշտ է գիտակցել, որ դատարանների առջև ծառայած խնդիրները առաջացնում են ճիշտ գնահատման

բարդություններ, ինչը անհրաժեշտ է մարդու կյանքը պաշտպանելու համար: Միաժամանակ պետք է հաշվի առնել, որ մարդու արժանապատվությունն ավելին է, քան մարդկային կյանքը, և որ մարդիկ կարիք ունեն սոցիալական շփումների: Պետք է գիտակցել, որ այն կարող է տևել շաբաթներ, նույնիսկ ամիսներ, մինչև որ իրավական համակարգը կարողանա գնահատել բոլոր ձեռնարկված քայլերը:

14. Միևնույն ժամանակ, չնայած որոշ միջոցառումներ անկասկած հարցեր են առաջացնում, թե արդյոք դրանք համարժեք և համաչափ են, և երաշխավորում են հավասար վերաբերմունք տարբեր սոցիալական դերակատարների նկատմամբ՝ բոլոր կրոնական հավատքի քաղաքացիները պետք է գործադրեն համբերություն և բարի կամք: Նրանք պետք է շարունակեն հետևել պաշտոնական կանոնակարգերին, որոնք նախատեսում են այլոց պաշտպանել վարակից և իրենց օգնությունն առաջարկել այն վայրերում, որտեղ սոցիալական կյանքի սահմանափակումները հատուկ դժվարություններ են առաջացնում:

Translated by:
Karin Kocharian
Armenian Apostolic Church